Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Աղվանի համայնքի
ավագանու 2016թ. դեկտեմբերի 30-ի N24-Ն
որոշման

«Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Աղվանի համայնքի
ավագանու 2015թ. սեպտեմբերի 28-ի N15-Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՂՎԱՆԻ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1.ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.2.ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2.3.ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

2.4.ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.6. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

4.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

5.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղվանի համայնքի /այսուհետ՝ Համայնք/ զարգացման սույն ծրագիրը /այսուհետ՝ Ծրագիր/ նախատեսված է իրականացնել Համայնքի, Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակներում և վերաբերում է 2015 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր, 2016, 2017, 2018 և 2019 թվականներին: Ծրագիրն իրենից ներկայացնում է Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ Համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

Ծրագրի իրականացմանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են մասնակից լինել նաև Հայաստանի Հանրապետությունը, իրավաբանական և ֆիզիկական անձինք: Ծրագիրը կազմվել է, նկատի ունենալով այն, որ Համայնքը Հայաստանի Հանրապետությունում գործող իրավաբանական անձ է, իսկ նրա տարածքը՝ Հայաստանի Հանրապետության անքակտելի մասը: Այդ առումով հաշվի են առնվել նաև Համայնքի և արտաքին միջավայրի հնարավոր փոխազդեցությունները, Հայաստանի Հանրապետության իրավական, սոցիալ-տնտեսական արդի իրողությունները և զարգացման հեռանկարները, Համայնքի սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակը, ունեցած ներուժը՝ բնական, աշխարհագրական, տնտեսական, սոցիալական, մարդկային և այլն:

Ծրագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության հավանությանն արժանացած մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի զարգացման ծրագրին:

Ծրագրի կարևոր շեշտադրումն է՝ Համայնքը և նրա վարչական տարածքի մեջ մտնող Աղվանի գյուղը պետք է ունենան զարգացման **կանխատեսելի հեռանկար:** Համայնքի բնակիչների համար կարևոր է Աղվանի գյուղի կանխատեսելի ապագա ունենալու հանգամանքը: Այսինքն, Աղվանին պետք է ունենա առնվազն առաջիկա 50 տարիների համար կանխատեսելի և ենթադրվող զարգացումների տեսլական, որտեղ պետք է նշված լինեն գյուղի զարգացման հեռանկարները՝ կապված կառավարության ապագա ծրագրերի հետ (օրինակ՝ որոշակի տարածքների հանրային գերակա շահ ճանաչելու և այլ խնդիրներ) և եթե որևէ մեկը, ով ցանկանում է բնակություն հաստատել, տուն կառուցել, տուն վերանորոգել կամ որևէ այլ ներդրում կատարել Աղվանիում, ապա նա պետք է լիարժեք տեղեկացված լինի բնակավայրի առաջիկա 50 տարիների տեսլականի մասին: Այս կանխատեսելի հեռանկարի ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և պետության փոխհամաձայնեցված գործունեություն:

Ծրագիրը մշակվել է հիմք ընդունելով Համայնքի վերընտիր ղեկավարի, Համայնքի ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները, 2015 թվականի սեպտեմբերի 25-ին Աղվանի գյուղում կազմակերպված հանրային լսումների ժամանակ Համայնքի բնակիչների կողմից արված առաջարկությունները:

Ծրագրի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում, Համայնքում բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով, հետևողականորեն բարելավել Համայնքի բնակչության բարեկեցությունը, ապահովել Համայնքի կայուն և շարունակական զարգացումը:

Ելնելով Համայնքի շահերից և հաշվի առնելով առաջարկվող նոր մեթոդաբանությունը, ինչպես նաև 2016 թվականի նոյեմբերի 13-ից Համայնքի նոր ավագանու կազմավորումը և իր լիազորությունների ստանձնումը, Ծրագիրը Համայնքի նոր ավագանու կողմից ենթարկվել է որոշակի փոփոխությունների և լրացումների, իսկ հետագայում օրենսդրությամբ սահմանված կարգով Ծրագրի առանձին դրույթներ կարող են ժամանակի ընթացքում էլի փոխվել, թարմացվել, լրացվել կամ հանվել՝ կախված առաջնահերթությունների փոփոխումից և անհրաժեշտությունից:

Ծրագրում «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պարտադիր կարգով ներառված են՝

1) Համայնքի տարածական զարգացումը սահմանող՝ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման կամ դրանց փոփոխման (լրացման) մասին դրույթներ.
2) շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ.
3) Համայնքում գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ.
4) աղետների ռիսկերի կառավարման և քաղաքացիական պաշտպանության հիմնական մոտեցումներ.
5) Համայնքի կոմունալ ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված միջոցառումներ.
6) Համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների օտարման ծրագրերը, որոնք կազմում են Ծրագրի բաղկացուցիչ մասը.
7) Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ծրագրերը. որոնք նույնպես կազմում են Ծրագրի բաղկացուցիչ մասը:

Ծրագիրը կազմվել է պետական լիազոր մարմնի կողմից մշակված և համայնքի ղեկավարին ներկայացված համայնքի զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցի հիման վրա:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ.

Համայնքն ընդգրկում է մեկ բնակավայր՝ Աղվանի գյուղը, որի հեռավորությունը մարզկենտրոնից 36կմ է: Աղվանի գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 1720մ է, գյուղն ունի սահմանամերձ բնակավայրի կարգավիճակ:

Աղվանի գյուղը հիշատակվում է ուշ միջնադարից: Մինչև 19-րդ դարն այն բնակեցված էր: 19-րդ դարի ընթացքում գյուղի բնակչությունը սոցիալական ծանր պայմաններից ելնելով հիմնականում լքեց այն, տների մեծ մասն ավերվեց: Աղվանին վերստին շունչ առավ 1923 թվականին, հարևան Տանձատափ գյուղից վերաբնակեցվածների միջոցով: 1928 թվականին ստեղծվել է Աղվանու կոլտնտեսությունը և գյուղական խորհուրդը: 1952 թվականին գյուղական խորհուրդը լուծարվել է, կոլտնտեսությունն ընդգրկվել է Տանձավերի կոլտնտեսության, իսկ գյուղը Տանձավերի գյուղխորհրդի կազմում: Այնուհետև, մինչև 1991 թվականը գործել է Տանձավերի միացյալ խորհտնտեսությունը:

1991 թվականին Աղվանին անջատվել է Տանձավերի գյուղխորհրդից՝ կազմելով ինքնուրույն վարչական միավոր:

Ինչպես ամբողջ Հայաստանում, այնպես էլ Աղվանիում 1996 թվականի նոյեմբերի 10-ին առաջին անգամ ձևավորվեցին տեղական ինքնակառավարման մարմինները, գյուղը ստացավ համայնքի կարգավիճակ:

Գյուղի հարավային մասում կա 17-18 դդ. գերեզմանոց՝ տապանագիր խաչքարերով և բազալտե սրբատաշ քարերով կառուցված թաղակապ կիսավեր եկեղեցի: Գյուղից մոտ 400մ ներքև, հարավ-արևմտյան մասում կան մ.թ.ա. 2-1 հզմ. դամբարանադաշտեր: Գյուղում կառուցված է 1941-45թթ. Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 92 մարդ, որից՝ արական սեռի բնակչություն՝ 45 մարդ, իգական սեռի բնակչություն՝ 47 մարդ: Համայնքի ծխերի թիվը 44 է: Բնակչության տարիքային կազմը՝ 0-6 տարեկան երեխաներ՝ 2 մարդ, 7-17 տարեկան դպրոցականներ՝ 13 մարդ, 18-62 տարեկաններ՝ 52 մարդ, թոշակառուներ՝ 25 մարդ:

Փախստականներ, միակողմանի ծնողազուրկ երեխաներ, երկկողմանի ծնողազուրկ երեխաներ, 1941-1945թթ. Հայրենական պատերազմի մասնակիցներ, զոհվածների ընտանիքներ չկան: Աֆղանական պատերազմի մասնակից է 1 հոգի:

Աշխատունակ բնակչության թիվը 57 մարդ է, այդ թվում զբաղվածները /սեփականաշնորհված հողերի հաշվառմամբ/ 57 մարդ:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսական գործունեությամբ՝ անասնապահությամբ, հողագործությամբ: Գյուղապետարանում, ակումբ-գրադարանում և բուժկետում զբաղված է ընդամենը 6 մարդ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններն են Համայնքի ղեկավարը և Համայնքի ավագանին: Համայնքի ղեկավարն իր լիազորություններն առաջին անգամ ստանձնել է 2007 թվականին, երկրորդ անգամ վերընտրվել է 2011 թվականին, իսկ երրորդ անգամ՝ 2015 թվականի հունիսի 7-ին և պաշտոնը վերստանձնել է 2015 թվականի հուլիսի 26-ին: Պաշտոնավարման ժամկետը 4 տարի է՝ մինչև 2019 թվականի հուլիսի 25-ը:

Համայնքի ավագանին բաղկացած է հինգ անդամից: Ավագանին ձևավորվել է 2012 թվականի սեպտեմբերի 9-ի ընտրություններում, իր լիազորություններն ստանձնել է 2012 թվականի նոյեմբերի 13-ին: Պաշտոնավարման ժամկետը նույնպես չորս տարի է՝ մինչև 2016 թվականի նոյեմբերի 12-ը: Փաստորեն Համայնքի ավագանու և Համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետների միջև կա տարբերություն, որը կապված է 2007 թվականին համայնքի ղեկավարի արտահերթ ընտրության անցկացման հետ:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղվանիի համայնքապետարանի աշխատակազմում կա համայնքային ծառայության երկու պաշտոն: Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 21-ի N206 հրամանի N7 հավելվածով: Տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակառույցների վերաբերյալ տվյալները հետևյալն են.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂՎԱՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ

Հ.հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	Պաշտոնային դրույքաչափը, ծանոթություն
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1	Համայնքի ղեկավար	1	105,686
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
2	Աշխատակազմի քարտուղար	1	77905
3	Առաջատար մասնագետ-հաշվապահ	1	72752
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ			

4	Ակումբավար	1	77905
5	Հավաքարար	1	72752
6	Բուժքույր	1	Ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից, չի մտնում գյուղապետարանի աշխատակազմի մեջ

2.2.ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի տարածքում ներկայումս կա խանութի մեկ տիպային շենք, սակայն խանութը չի գործում: Այլ գրանցված ձեռնարկություններ չկան: Համայնքի վարչական տարածքի անտառներում գործունեություն է իրականացնում Գորիսի անտառտնտեսությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն համարվող գույքի տիպային ցանկը սահմանվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի N51 որոշմամբ: Վերջին անգամ կատարված հաշվառմամբ Համայնքի սեփականություն համարվող առկա գույքի ցանկը հետևյալն է.

Անշարժ գույք

Հ.Հ	Գույքի անվանումը	Չափի միավորը	Քանակը
1.	Համայնքային կենտրոնի շենք (ակումբ-գրադարան, բուժկետ, գյուղապետարան)	Հատ	1
2.	Կենցաղի տուն	Հատ	1
3	Անասնագոմ	Հատ	1
4.	Հուշարձան	Հատ	1

Աղվանիի համայնքապետարանի գույք

Հ.Հ	Գույքի անվանումը	Չափի միավորը	Քանակը
1.	Համակարգիչ	Հատ	1
2.	Համակարգչային սեղան	Հատ	1
3.	Տպիչ սարք	Հատ	1
4.	Աթոռ	Հատ	7
5.	Սեղան	Հատ	2
6.	Երկաթյա պահարան	հատ	2
7.	Վարագույր	Հատ	3

9.	Արբանյակային ալեհավաք	Հատ	1
10.	Արբանյակային ընդունիչ սարք	Հատ	1
11.	Պահարան	Հատ	5

Ակումբ-գրադարանի գույք

1.	Սեղան		2
2.	Վարագույր		6
3.	Աթոռ		3
4.	Գրքային ֆոնդ		3000

Կենցաղի տան գույք

1.	Սեղան	Հատ	1
2.	Նստարան 14 տեղանոց	Հատ	10
3.	Նստարան 30 տեղանոց	Հատ	3
4.	Սպասք 250 հոգու համար	Կոմպլեկտ	1
5.	Վարագույր	հատ	3

Համայնքի ենթակառուցվածքների գնահատում

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Մակերես (քառ.մ.)	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման /վերականգնման/ փոխարինման կարիք
1.	Համայնքային կենտրոն	Աղվանի				
2.	Կենցաղի տուն	Աղվանի				
3.	Հուշարձան	Աղվանի				
4.	Անասնագոմ	Աղվանի				

ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում կա մասնավոր հատվածին պատկանող 56 առանձնատուն 3500 քառ. մետր ընդհանուր մակերեսով: Կան նաև կիսաքանդ, վթարային շինություններ: Սեփականատերերն իրենք են հոգ տանում իրենց առանձնատների պահպանման համար:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքի հողերի վիճակը.

Հողեր (ընդամենը)՝ 998 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 664 հա, որից՝
- վարելահող՝ 77 հա, բազմամյա տնկարկ՝ 3 հա, խոտհարք՝ 81 հա, արոտ՝ 386 հա, այլ հողատեսք՝ 117 հա
- բնակավայրերի հողեր՝ 26 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 1 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 2 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 3 հա,
- անտառային հողեր՝ 301հա, որից անտառածածկ՝ 265 հա
- ջրային հողեր՝ 2 հա:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աղվանիում 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա է 44 գյուղացիական տնտեսություն: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1720 մետր բարձրության վրա: Այդ առումով Համայնքի վարչական տարածքը ավելի շատ նպաստավոր է անասնապահության զարգացման համար: Անասնապահության ճյուղերից ներկայացված են տավարաբուծությունը, խոզաբուծությունը: Պայմաններ կան նաև դաշտավարությամբ, այգեգործությամբ և գյուղատնտեսության այլ ճյուղերով զբաղվելու համար: Գյուղատնտեսության բնագավառում բնակչության զբաղվածությունը կազմում է 95 տոկոս: Համայնքի ոռոգելի գյուղատնտեսական նշանակության հողատարածքները կազմում են 14 հա (տնամերձ հողամասերը):

Տնտեսությունը

Գյուղատնտեսությամբ զբաղվում է 44 գյուղացիական տնտեսություն:
2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա անասնագլխաքանակը՝

Հ.Հ	Անվանում	Չափի միավորը	Քանակը
1	Խոշոր եղջերավոր անասուններ	Գլուխ	260
1.1	Այդ թվում՝ կովեր	Գլուխ	108
2	Մանր եղջերավոր անասուններ	Գլուխ	35
2.1	Մայրեր	Գլուխ	25
3	Խոզեր	Գլուխ	16

3.1	Այդ թվում՝ մայրեր	Գլուխ	7
4	Թռչուններ	Թև	168
4.1	Այդ թվում՝ հավեր	Թև	154
5	Ձիեր, ավանակներ, ջորիներ	Գլուխ	8
6	Մեղվաընտանիքներ	Փեթակ	4

2014 թվականի ընթացքում արտադրվել է՝

Հ.Հ	Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Տանքսը /հա/	Չափի միավորը
1	Կարտոֆիլ	2	Տենտներ
2	Բանջարեղեն	1	Տենտներ
3	Պտուղ	3	Տենտներ

Հ.Հ	Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Չափի միավորը	Քանակը
1	Կաթ	Լիտր	172800
2	Միս	Տոննա	30
3	Բուրդ	Կգ	60
4	Ձու	Հատ	12000
5	Մեղր	Կգ	1000

Մեկ կովի միջին տարեկան կաթնատվությունը 2014 թվականին կազմել է 1600 լիտր:

ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնատարածքային առումով Աղվանին բարենպաստ դիրքում է գտնվում: Համայնքի ուժեղ կողմ է Աղվանիի բնությունը: Հանքարդյունահանող և շրջակա միջավայրն աղտոտող այլ ձեռնարկություններ չկան: Ջրային ավազանը, անտառները, հողը համեմատաբար մաքուր են:

Գյուղում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանություն չի կազմակերպվում, յուրաքանչյուր տնտեսություն իր ուժերով այն կազմակերպում է: Կան առանձնատներին մոտ գտնվող առանձին տարածքներ, որտեղ բնակչությունը նետում է աղբը: Կենտրոնացված աղբավայր գոյություն չունի:

Համայնքի վարչական տարածքում առկա անտառի կառավարումն իրականացնում է Գորիսի անտառտնտեսությունը: Փաստորեն, ունենալով անտառի բավարար պաշար, Համայնքն անտառի կառավարմանը չի մասնակցում:

ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը գտնվում է Կապան մարզկենտրոնից 36կմ հեռավորության վրա, միջհամայնքային նշանակության Կապան-Տանձավեր-Աղվանի ավտոճանապարհի Վերին Խոտանան-Տանձավեր-Աղվանի հատվածը գտնվում է անմխիթար վիճակում, նախկին ասֆալտը քայքայվել է և ճանապարհը հիմնականում խճապատ է: Գյուղով անցնում է Կապան-Տաթև միջհամայնքային ավտոբուսային երթուղին: Կապանից մինչև Աղվանի ավտոմոբիլային ճանապարհի երկայնքով ընկած են Սյունիք, Աճանան, Նորաշենիկ, Շրվենանց, Վերին Խոտանան և Տանձավեր բնակավայրերը: Խճապատ ճանապարհներով կապ կա նաև Քաշունի, Սվարանց, Տանձատափ և Տաթև գյուղերի հետ: Ներհամայնքային ճանապարհներն ասֆալտապատ չեն:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Աղվանիում կա մեկ հատ խանութի տիպային շենք, սակայն ներկայումս խանութը չի գործում: Բնակչության համար մեծ անհրաժեշտություն կա խառը ապրանքներ վաճառող խանութ ունենալու: Սակայն ներկայումս տնտեսվարողների համար ձեռնտու չէ առկա պահանջարկի պայմաններում խանութ գործարկելը: Բնակչությունն իր հիմնական առօրյա հոգսերի համար շաբաթական մեկ կամ երկու անգամ մեկնում է Կապան՝ անհրաժեշտ գնումներ կատարելու նպատակով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Աղվանի գյուղում առկա է դպրոցի շենք: Դպրոցում սովորում է 5 աշակերտ, դպրոցի անձնակազմը՝ 9 հոգի:
Նախադպրոցական ուսումնական հաստատություններ չկան:

ՄՇԱԿՈՒՅԹ, ԱՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գյուղում կա ակումբ-գրադարան (գրադարանում կա 3000 կտոր գիրք),կենցաղի տուն 220 նստատեղով /ծիսակատարությունների սրահ/:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում կա բուժկետ, բուժկետում աշխատում է մեկ բուժքույր: Առաջին բուժօգնություն ստանալու հնարավորությունը կա, բայց ստացիոնար բուժման հնարավորություններ չկան:

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքում հատուկ հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ չկան: Աղվանիի շրջակայքի բնությունը բնական այնպիսի միջավայր է ապահովում, որ համայնքի բնակչությունն իր հանգիստն անց է կացնում շրջակա անտառներում, բացատներում, բնական աղբյուրների մոտ և այլն:

2.3.ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համայնքի տարածքում 2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ պետության կողմից հանրապետական և մարզային ծրագրերով կոնկրետ Համայնքի համար հասցեականորեն նախատեսված, միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի կողմից նախաձեռնած աշխատանքներ և միջոցառումներ չեն նախատեսված:

2.4.ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Համայնքի 2014թ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2015-2019թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հազ. դրամ

Հ/Հ	Մուտքերի անվանումը	2014	2014	2015	2016	2017	2018	2019
		Պլան	փաստ	Պլան	Պլան	Պլան	Պլան	Պլան
1	2	3	4	5	6	7	8	9
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	4608.6	4608.6	5256.9	6000	6500	7000	7500
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*							
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	0	0	0	0	0	0	0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	0	0	0	0	0	0	0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	0	0	0	0	0	0	0
	Հողի հարկ	551	551	692	692	692	692	692
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	0	0	0	0	0	0	0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	90	90	90	120	120	120	120
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	0	0	0	0	0	0	0
	Տեղական տուրքեր	0	0	0	0	0	0	0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	0	0	0	0	0	0	0
	Պետական տուրքեր	0	0	0	0	0	0	0
1.5	Այլ հարկային եկամուտներ	0	0	0	0	0	0	0
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ	0	0	0	0	0	0	0
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ	0	0	0	0	0	0	0

2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ				0			
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0	0
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0	0
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	3500	3500	3500	4000	4000	4000	4000
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	0	0	0		0	0	0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	0	0	0	0	0	0	0
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0	0	0	0	0	0	0
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0	0
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0	0
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	0	0	0	0	0	0	0
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0	0
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	0	0	0	0	0	0	0
3.1	Տոկոսներ	0	0	0	0	0	0	0
3.2	Շահաբաժիններ	0	0	0	0	0	0	0
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	0	0	0	0	0	0	0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ				0			

	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	0	0	0	0	0	0	0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ	0	0	0	0	0	0	0
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	0	0	0	0	0	0	0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	0	0	0	0	0	0	0
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	0	0	0	0	0	0	0
3.5	Վարչական գանձումներ	0	0	0	0	0	0	0
	Տեղական վճարներ	0	0	0	0	0	0	0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	0	0	0	0	0	0	0
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ	0	0	0	0	0	0	0
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից	0	0	0	0	0	0	0
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	0	0	0	0	0	0	0

	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից	0	0	0	0	0	0	0
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0	0
3.8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0	0
3.9	Այլ եկամուտներ*	0	0	0	0	0	0	0
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	0	0	0	0	0	0	0
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	0	0	0	0	0	0	0
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	0	0	0	0	0	0	0
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	0	0	200	0	0	0	0
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
	Շարժական գույքի իրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
2	Պաշարների իրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
	Հողի իրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	0	0	0	0	0	0	0

Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	0	0	0	0	0	0	0
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ	0	0	0	0	0	0	0
1.1	Արժեթղթեր	0	0	0	0	0	0	0
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
	-հիմնական գումարի մարում	0	0	0	0	0	0	0
1.2	Վարկեր	0	0	0	0	0	0	0
	-վարկերի ստացում	0	0	0	0	0	0	0
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում	0	0	0	0	0	0	0
1.3	Փոխատվություններ	0	0	0	0	0	0	0
	-բյուջետային փոխատվությունների ստացում	0	0	0	0	0	0	0
	-ստացված փոխատվությունների գումարի մարում	0	0	0	0	0	0	0
2	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	0	0	0	0	0	0	0
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն	0	0	0	0	0	0	0
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում	0	0	0	0	0	0	0
2.2	Փոխատվություններ	0	0	0	0	0	0	0
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր	0	0	0	0	0	0	0
	-փոխատվությունների տրամադրում	0	0	0	0	0	0	0

2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	0	0	0	0	0	0	0
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս	0	0	0	0	0	0	0
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս	0	0	0	0	0	0	0
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում	0	0	0	0	0	0	0
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը	0	0	0	0	0	0	0
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	0	0	0	0	0	0	0
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ	0	0	0	0	0	0	0
1.1	Արժեթղթեր	0	0	0	0	0	0	0
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր	0	0	0	0	0	0	0
	-հիմնական գումարի մարում	0	0	0	0	0	0	0
1.2	Վարկեր	0	0	0	0	0	0	0
	-վարկերի ստացում	0	0	0	0	0	0	0
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում	0	0	0	0	0	0	0
1.3	Փոխատվություններ	0	0	0	0	0	0	0
	-փոխատվությունների ստացում	0	0	0	0	0	0	0
	-ստացված փոխատվությունների գումարի մարում	0	0	0	0	0	0	0

2.5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.6. ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ուժեղ կողմերն են.

Անտառամերձ գոտու և տեսարժան վայրերի առկայությունը, Աղվանիի բնությունը՝ բարձրադիր լեռներ, անտառներ, ջրաղբյուրներ, Տաթևի կլաստերի համայնքների զարգացման հետ կապված,

Աղվանին կարող է դառնալ Սյունիքի մարզի զբոսաշրջության վայրերից կամ հանգստի գոտիներից մեկը:

Համայնքի աշխարհագրական դիրքը՝ համեմատաբար մոտ լինելը Տաթևին: Հեռախոսակապի առկայությունը:

Շրջակայքի ջրաղբյուրների, ջրային պաշարների առկայությունը, որոնց շնորհիվ կարելի է լուծել գյուղի խմելու և ոռոգման ջրի հիմնախնդիրը:

Համայնքի բնակիչների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկայի և բեռնատար ավտոտրանսպորտի առկայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են.

Ներհամայնքային ճանապարհների, փողոցների վատ վիճակը

Համայնքում առկա վթարային կառույցների թիվը

Խմելու և ոռոգման ջրահամակարգերի վերանորոգման և նոր համակարգերի կառուցման անհրաժեշտությունը

Համայնքի գազիֆիկացված չլինելը

Անտառային կառավարմանը Համայնքի մասնակից չլինելը

Հեռավորությունը Երևան քաղաքից և այդ առումով մայրաքաղաքի հետ թույլ կապը

ՀՀ պետական կառավարման մարմինների ճյուղային ստորաբաժանումների բացակայությունը

Բենզինի լցակայանների, գազի լիցքավորման կետերի, հանրային սննդի օբյեկտների և մի շարք այլ անհրաժեշտ օբյեկտների բացակայությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի համար բարենպաստ փոփոխություններ կարող են լինել՝

Համայնքի մասնակցության ապահովումը Համայնքի վարչական տարածքի անտառների կառավարմանը

Համայնքի գազիֆիկացումը

Կապան-Տաթև ավտոճանապարհի կապիտալ վերանորոգումը:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՎՏԱՆԳ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերջին շրջանում Համայնքի վարչական տարածքում և հարևան տարածքներում ընթացել են երկրաբանահետախուզական աշխատանքներ, որոնք կարող են խթանել հանքարդյունաբերության զարգացումը Աղվանիի կամ հարակից համայնքների տարածքներում:

Հանքարդյունաբերության հեռանկարն Աղվանիի շրջակա բնության առկայության պայմաններում ռազմավարական առումով անցանկալի է և անթույլատրելի: Այլընտրանքը զբոսաշրջության և գյուղատնտեսության զարգացումն է և այս առումով անհրաժեշտ է բացառել Համայնքի վարչական տարածքում որևէ հանքարդյունաբերական գործունեություն:

Հարկային պարտավորությունների՝ հողի հարկի, գույքահարկի կատարման վատ վիճակը:

Խմելու ջրի ներհամայնքային համակարգի մաշվածությունը:

Վթարային շենքերի, շինությունների առկայությունը:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Համայնքի զարգացման ծրագրի ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու միջոցով հետևողականորեն բարելավել Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, Համայնքը դարձնել տարածաշրջանային զբոսաշրջության և հանգստի վայրերից մեկը, մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր:

Առաջիկա չորս տարում Համայնքի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են՝

Համայնքի բնակչության և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը
Համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավումը
Բնակելի շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը և նորոգումը
Համայնքի վարչական տարածքում նոր աշխատատեղերի ստեղծումը, փոքր և միջին բիզնեսը՝ գյուղատնտեսությունը զարգացնելու և այլ ձևերով
Համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ համարժեք քայլերի իրականացման ապահովումը
Համայնքի ֆինանսական դրության բարելավումը՝ Համայնքի բյուջեի եկամուտների, տեղական տուրքերի և վճարների սահմանման և գանձման ճկուն քաղաքականություն իրականացնելու միջոցով
Համայնքի բյուջեի միջոցների ռացիոնալ և նպատակային բաշխումը
Համայնքային ենթակայության կառույցների աշխատանքի արդյունավետության բարձրացումը
Համայնքում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծումը և դրա պահպանումը
Համայնքի բնակիչների, տարբեր սոցիալական խավերի միջև հանդուրժողականության խորացմանը, կոլեկտիվիզմի ոգուն, միասնականությանը նպաստելը
Համայնքային հայրենասիրության արմատավորմանը նպաստելը:
Բնակչությանը խմելու և ոռոգման ջրի մատակարարման բարելավումը
Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վերանորոգումը
Սելավատարների վերակառուցումը
Համայնքի բնակչության մշակութային կյանքի և աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպումը:

3.2. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խմելու և ոռոգման ջրամատակարարման բարելավում

Մոտակա սարի լանջերից գյուղ է հասցվել խմելու ջուր, որից օգտվում են Համայնքի տնտեսությունները: Խողովակների կոռոզիայի հետևանքով ներհամայնքային ցանցում հաճախակի են վթարները և ջրի կորուստները, ցանցը վերանորոգման կարիք ունի:
Անհրաժեշտ է իրականացնել խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում:
Երկարատև ժամանակաշրջանի համար Աղվանիի բոլոր տնտեսություններն ապահովված կլինեն խմելու և ոռոգման համար պիտանի մաքուր ջրով:

Բնակելի և ոչ բնակելի ֆոնդերի շահագործում և նորոգում

Անկախ սեփականության ձևից՝ չշահագործվող, ավերված, վերականգնման ենթակա անհատական բնակելի առանձնատների, շինությունների հաշվառում և օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց հետագա ճակատագրի որոշում:

Աղբահանություն և փողոցների մաքրում

Աղբահանության բարելավում: Համայնքային նշանակության որևէ կազմակերպության կողմից աղբահանություն չի իրականացվում: Բնակչությունն ինքն է կազմակերպում տնտեսությունների աղբահանությունը սեփական միջոցներով: Կենսաբանական աղբը օգտագործվում է անասունների, թռչունների համար որպես կեր, գոմաղբը որպես պարարտանյութ, իսկ կենցաղային աղբի մյուս մասը բնակչությունը սովորույթի ուժով կուտակում է նախկինում նախատեսված բնակելի շենքերին մոտ «թաքնված» հատվածներում: Անհրաժեշտ է կարգավորել աղբահանության խնդիրը և հատկացնել առանձին տարածքներ՝ աղբի կուտակման համար:

ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԿԱՊ

Համայնքի ճանապարհային ցանցի բարելավում՝ առաջին հերթին Կապան- Աղվանի միջհամայնքային նշանակության ճանապարհի բարեկարգում, Աղվանիի գյուղամիջյան և դեպի հանդամասեր, դեպի սար տանող ճանապարհների վերանորոգում:

Տեղեկատվության մատչելիության բարելավում: Միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառում Համայնքում: Հետամուտ լինել Համայնքի տարածքում ռադիոհաղորդումների և հեռուստահաղորդումների հեռարձակման համակարգի ընդլայնմանը, հեռահաղորդակցության լիարժեք իրագործմանը /Հայաստանի ոչ բոլոր հեռուստաալիքներն են հասանելի Համայնքում, անհրաժեշտ է ընդլայնել եթերային տարբերակով հեռարձակվող հեռուստաալիքների քանակը/:

Խթանել ինտերնետային կապի հասանելիությունն ու մատչելիությունը: Նպաստել Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների և Սյունիքի մարզպետարանի միջև գործող արդիական ինտերնետային կապի ապահովմանը:

ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում ագրարային քաղաքականությունը պետք է զուգորդել գյուղացիական տնտեսություններին ցուցաբերվող հասցեական աջակցության ծավալների մեծացմամբ և գյուղատնտեսության բնագավառում գործարար առողջ միջավայրի ստեղծմամբ:

Նպաստել ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործմանը, հատկապես գյուղատնտեսական հողատեսքերի արտադրական շրջանառության մեջ ամբողջական ներգրավմանը,
Հետևողական աշխատանքներ տանել Համայնքի գյուղացիական տնտեսություններին մատչելի վարկային ռեսուրսներով ապահովելու ուղղությամբ
Կարևորություն տալ գյուղական տարածքային համալիրների ձևավորմանը, առավել բարձր մրցունակություն ապահովող և արտահանման կողմնորոշում ունեցող արտադրատեսակների արտադրության խթանմանը.
Առանձնահատուկ ուշադրություն դարձնել սերմնաբուծության և տոհմաբուծության զարգացմանը, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի շրջանացմանը և գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավմանը.
Իրականացնել Համայնքի ոռոգման համակարգերի վերանորոգում և արդիականացում.
Հեղեղատարների, սելավատարների վերանորոգում, կառուցում.
Անասնապահության բնագավառում տոհմային գործի բարելավում.
Ամառային հեռագնա արոտավայրերի համարժեք բաշխում՝ ըստ գյուղացիական տնտեսությունների պահանջների.
Մեղվաբուծության զարգացման խթանում՝ առևտրային ծավալներով մեղրի հավաքագրման և իրացման նպատակներով:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԷՆԵՐԳԵՏԻԿԱ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐ

Բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալը.

Նպաստել Համայնքի վարչական և հարակից տարածքների բնության և շրջակա բնական միջավայրի պահպանությանը:

Նպաստել Համայնքի վարչական տարածքում գտնվող անտառների համայնքային կառավարմանը: Անտառի՝ Համայնքին պատկանող մասի ճակատագիրը պետք է որոշվի համատեղ՝ պետության և Համայնքի կողմից: Համայնքը պետք է որոշի ինչպես տնօրինել բարիքները՝ փայտանյութը և անտառային մյուս բարիքները, հաշվի առնելով բնապահպանական առաջնահերթությունները:

Նպաստել Համայնքի գազիֆիկացմանը: Աղվանիին ամենամոտ գազիֆիկացված բնակավայրն է Աճանանը: Գազը գյուղ հասցնելու համար անհրաժեշտ է անցկացնել գազատար և այնուհետև սկսել առանձին տնտեսությունների գազիֆիկացումը՝ ներհամայնքային ցանցի կառուցումը: Համայնքի և հարակից տարածքների անտառներին լուրջ վնաս հասցրեցին 1990-ական թվականներին կատարված անտառհատումները, որոնք պայմանավորված էին տնտեսական ու էներգետիկ ճգնաժամով, էլեկտրոէներգիայի, գազի մատակարարման, կենտրոնացված ջերմամատակարարման բացակայությամբ: Բնակավայրի գազիֆիկացումը հնարավորություն կտա բարելավել բնակչության կենսամակարդակը և միաժամանակ զգալիորեն կրճատել բնակչության վառելափայտի պահանջարկը, անտառհատումները՝ բարձրացնել անտառի ինքնավերականգնման ներուժը:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Համայնքը զբոսաշրջության զարգացման համար ներուժ ունի, որը դեռևս չի օգտագործվել: Համայնքն ունի հարուստ բնաշխարհ, պատմամշակութային հուշարձաններ, Տաթևի վանքին և ճոպանուղուն գտնվում է համեմատաբար մոտ:

Զբոսաշրջությունը զարգացնելու համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալը.

Համայնքի զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակում, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը:

Զբոսաշրջության զարգացման համար առաջնահերթ է ենթակառուցվածքների ներդաշնակ զարգացումը՝ հարակից տարածքներում գտնվող հանգստյան տների վերանորոգումը, վերակառուցումը, Համայնքում առկա մշակութային ժառանգության՝ պատմամշակութային հուշարձանների գույքագրումը, դեպի պատմամշակութային հուշարձաններ տանող ավտոճանապարհների վերանորոգումը:

Համայնքի տարածքում էկոտուրիզմի զարգացման խթանում.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի "«Տաթև» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին" N848-Ն որոշման համաձայն Աղվանի գյուղական համայնքը մտել է "Տաթև" զբոսաշրջային կենտրոնի մեջ՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Խոտի, Շինուհայրի, Հալիձորի, Տաթևի, Սվարանցի, Տանձատափի, Բարձրավանի և Քաշունիի գյուղական համայնքների հետ միասին: «Տաթև» զբոսաշրջային կենտրոնում կատարվող միջոցառումները պետք է նպաստեն Համայնքում նոր, որակյալ աշխատատեղերի (այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական) ստեղծմանը:

«Տաթև» զբոսաշրջային կենտրոնում զբոսաշրջության զարգացմանը նպաստող ենթակառուցվածքներ ձևավորելը և զարգացնելը՝ «ազգային նկարագրին, առանձնահատկություններին ու ավանդույթներին, պատմամշակութային ժառանգությանը հարիր, միջազգային չափանիշներին համապատասխանող, լիարժեք ավարտված, խնամված և գրավիչ ճարտարապետական միջավայր» տեսլականին համապատասխան, կնպաստեն նաև Աղվանու զարգացմանը:

Կարելի է ձևավորել զբոսաշրջային տների (B & B) ցանց և զարգացնել այն:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալը.

Աղվանի գյուղի դպրոցի վերաբացման, նախադպրոցական ուսումնական հաստատության /մանկապարտեզի/ բացման հնարավորության ուսումնասիրություն, միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան կրթության որակ ապահովող կրթօջախի ստեղծում՝ դպրոցի շենքի վերանորոգում, շենքի հարակից տարածքի բարեկարգում, դպրոցի ապահովում բավարար քանակությամբ համակարգչային սարքավորումներով և այլն:

Աջակցություն Հայ ինքնության պահպանմանն ուղղված քաղաքականության իրականացման համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը Համայնքում, միաժամանակ՝ համահայկական արժեքների քարոզման համատեքտում Համայնքի բնակիչների մեջ նաև համայնքային հայրենասիրության զգացումի ամրապնդմանն ուղղված միջոցառումների իրականացում:

Նպաստել Աղվանցու՝ որպես աշխատավոր և հայրենասեր մարդու կերպարի, Համայնքում նոր ավանդույթների ձևավորմանը:

Նպաստել «Համայնքի օր» և «Աղվանցիների օր» կարգախոսով միջոցառման անցկացմանը՝ յուրաքանչյուր տարվա հուլիս ամսվա ընթացքում:

ՄՇԱԿՈՒՅԹ

Ոլորտում անհրաժեշտ է իրականացնել հետևյալը.

Աղվանի գյուղի հարավային մասում կա 17-18 դդ. գերեզմանոց՝ տապանագիր խաչքարերով և բազալտե սրբատաշ քարերով կառուցված թաղակապ կիսավեր եկեղեցի: Գյուղից մոտ 400մ ներքև, հարավ-արևմտյան մասում կան մ.թ.ա. 2-1 հզմ. դամբարանադաշտեր: Գյուղում կառուցված է 1941-45 թթ. Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձան: Այս օջախները կարելի է բարեկարգել՝ Տաթևի կլաստերի զարգացման համատեքստում զբոսաշրջիկների ուշադրությունը դեպի Աղվանի ուղղելու համար:

Համայնքի մշակույթի զարգացման դրույթների մշակում, որը ենթադրում է պատմամշակութային անշարժ հուշարձանների, մշակութային արժեքների և ոչ նյութական մշակութային ժառանգության ուսումնասիրում, մշակութային արժեքների հաշվառում և դրանց պահպանմանն ու օգտագործմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում:

Միջհամայնքային մշակութային համագործակցության աշխուժացում հարևան համայնքների, Սյունիքի մարզի, Հայաստանի այլ համայնքների հետ:

Բոլոր երիտասարդների համար Համայնքում ստեղծել հավասար մեկնարկային պայմաններ մասնագիտական և հասարակական կյանք մտնելիս, նպաստել երիտասարդների կարողությունների զարգացմանն ու դրսևորմանը:

Ազատամարտիկների, նրանց ընտանիքների կենսական հարցերի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի ապահովում, նրանց սոցիալական խնդիրների լուծում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ընտանեկան բժշկության համակարգի զարգացման խթանում.
Բուժկետի արդիականացում, նորագույն սարքավորումներով վերազինում.
Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում:

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակներում աջակցություն աղքատության հաղթահարմանը և հասարակության բևեռացվածությունը մեղմելուն ուղղված, պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականության իրականացմանը:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումն անհնար է պատկերացնել առանց գործարարության խթանման և բարենպաստ ներդրումային միջավայրի ապահովման: Այդ առումով բնագավառում անհրաժեշտ է իրականացնել հետևյալը.

Համայնքի ներդրումային գրավչության մակարդակի բարձրացում: Համայնքը Սյունիքի մարզում, Հայաստանում, արտաքին աշխարհում, գործարար միջավայրերում, Սփյուռքում ներկայացնելու նպատակով, Համայնքի մասին տեղեկատվության տարածում Ինտերնետով ե այլ տեղեկատվության միջոցներով, Համայնքը ներդրողներին և հանրությանը որպես զբոսաշրջության, գյուղատնտեսության համար զարգացման հեռանկարներ ունեցող բնատարածքային միավորի ներկայացում:

Համայնքի արտադրական նախկին կարողությունների համալիր ուսումնասիրություն, դրանց վերագործարկման հնարավորության գնահատում /անասնագոմեր, օժանդակ շինություններ և այլն/:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐ, ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N1351-Ն որոշման համապատասխան Համայնքում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ անցկացնելու նպատակով Համայնքի ղեկավարի կողմից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն կներկայացվի հայտ, որի հիման վրա կկատարվեն Համայնքում սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքներ, որոնց արդյունքում կկազմվի սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ: Ծրագրում, անհրաժեշտության դեպքում, կընդգրկվեն սեյսմիկ ռիսկի նվազեցման կարճաժամկետ, միջնաժամկետ ու հեռանկարային ծրագրեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ

Համայնքի կողմից որոշված կապիտալ ծրագրերի գնահատման չափանիշներ՝
Աղյուսակ 1. Կապիտալ ծրագրերի գնահատման չափանիշների ցանկ

1.	Հանրության աջակցություն
2.	Ուղղակի և անուղղակի շահառուների թիվ
3.	Տնտեսական զարգացում, աշխատատեղերի ստեղծում
4.	Հարատևություն (կենսունակություն)
5.	Ազդեցություն անապահով խավերի վրա, աղքատության նվազեցում
6.	Ազդեցություն բնական շրջակա միջավայրի վրա
7.	Հիմնական միջոցների պահպանում
8.	Համայնքի կարողությունների հզորացում

9.	Ֆինանսական ազդեցությունը համայնքի հետագա տարիների բյուջեների վրա

Աղյուսակ 2. Համայնքի զարգացման ծրագրում ընդգրկվող կապիտալ ծրագրերի ցանկ

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի նախնական մոտավոր արժեքը (հազ. դրամ)
1	Աղվանի գյուղի խմելու ջրատարի վերանորոգում (50մմ տրամ. 1,5կմ)	1200
2	Ոռոգման ջրատարի վերանորոգում (70մմ տրամ.2կմ)	2200
3	Համայնքային կենտրոնի շենքի տանիքի վերանորոգում 400 քառ. մետր	7500
	Ընդամենը	**10900**

Ծրագրի անձնագիր 1

«ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂՎԱՆԻ ԳՅՈՒՂԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՏԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Երկարատև ժամանակաշրջանի համար Աղվանիի բոլոր տնտեսությունների ապահովում խմելու և ոռոգման համար պիտանի մաքուր ջրով					
Ծրագրի անմիջական նպատակ	ԱՂՎԱՆԻ ԳՅՈՒՂԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՏԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ					
	Ցուցան իշներ	Ելակետայի ն արժեք	Թիրախային արժեքներ			
		2015	2016	2017	2018	2019
				100%		
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Զբաղվածության որոշակի մակարդակի ապահովում ծրագրում աշխատող աշխատուժի միջոցով					
	Ցուցան իշներ	Ելակետայի ն արժեք	Թիրախային արժեքներ			
		2015	2016	2017	2018	2019
				100%		
Ծրագրի հիմնական	Ֆինանսական միջոցների ներգրավում					

գործողությունները	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում Գնումների գործընթացի իրականացում Աշխատուժի ներգրավում Վերանորոգման աշխատանքների կատարում
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն՝ 1,2 մլն << դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Աղվանի գյուղի բնակչություն
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018
Ծրագրի համառոտ նկարագրություն	Պատասխանատու՝ Աղվանի գյուղական համայնքի ղեկավար Ծրագրի մոտավոր ընդհանուր արժեքը՝ 1200 հազար դրամ Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝ Վերանորոգում Ծրագրի հիմնավորումը՝ Աղվանի գյուղի շրջակայքում բավարար քանակությամբ ջուր կա գյուղի բոլոր տնտեսություններին խմելու ջրով ապահովելու համար: Ջրատարը վնասված է՝ կոռոզիայի ենթարկված: Անհրաժեշտ է ջրատարի վնասված խողովակները փոխարինել նորերով: Ծրագրի նպատակները՝ Երկարատև ժամանակաշրջանի համար Աղվանիի բոլոր տնտեսությունների ապահովում խմելու և ոռոգման համար պիտանի մաքուր ջրով: Ծրագրի խնդիրները՝ Անհրաժեշտ է ձեռք բերել 50մմ տրամագծով 1,5 կմ երկարությամբ խողովակ, ջրաբաշխիչներ և այլ օժանդակ նյութեր: Ջրաբաշխիչի տեղադրում: Ծրագրի ակնկալվող արդյունքները՝ Երկարատև ժամանակաշրջանի համար Աղվանիի բոլոր տնտեսություններն ապահովված կլինեն խմելու համար պիտանի մաքուր ջրով: Ուղղակի շահառուների թիվը՝ 92 մարդ: Այլ ծրագրերի հետ կապ չկա:

Ծրագրի անձնագիր 2

«ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂՎԱՆԻ ԳՅՈՒՂԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Երկարատև ժամանակաշրջանի համար Աղվանիի բոլոր տնտեսությունների ապահովում ոռոգման համար պիտանի ջրով					
Ծրագրի անմիջական նպատակ	ԱՂՎԱՆԻ ԳՅՈՒՂԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱՏԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ					
	Ցուցան իշներ	Ելակետայի ն արժեք	Թիրախային արժեքներ			
		2015	2016	2017	2018	2019
					100%	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Զբաղվածության որոշակի մակարդակի ապահովում ծրագրում աշխատող աշխատուժի միջոցով					
	Ցուցան իշներ	Ելակետայի ն արժեք	Թիրախային արժեքներ			
		2015	2016	2017	2018	2019
					100%	
Ծրագրի հիմնական գործողությունները	Ֆինանսական միջոցների ներգրավում Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում Գնումների գործընթացի իրականացում Աշխատուժի ներգրավում Վերանորոգման աշխատանքների կատարում					
Ծրագրի բյուջեն	Ընդահուր բյուջեն՝ 2,2 մլն ՀՀ դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը						
Ծրագրի հիմնական շահառուները	Աղվանի գյուղի բնակչություն					

Ծրագրի սկիզբ և ավարտ	2018
Ծրագրի համառոտ նկարագրություն	Պատասխանատու՝ Աղվանի գյուղական համայնքի ղեկավար Ծրագրի մոտավոր ընդհանուր արժեքը՝ 2200 հազար դրամ Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝ Վերանորոգում Ծրագրի հիմնավորումը՝ Աղվանի գյուղի շրջակայքում բավարար քանակությամբ ջուր կա գյուղի բոլոր տնտեսություններին ոռոգման ջրով ապահովելու համար: Ջրատարը վնասված է՝ կոռոզիայի ենթարկված: Անհրաժեշտ է ջրատարի վնասված խողովակները փոխարինել նորերով: Ծրագրի նպատակները՝ Երկարատև ժամանակաշրջանի համար Աղվանիի բոլոր տնտեսությունների ապահովում ոռոգման համար պիտանի ջրով: Ծրագրի խնդիրները՝ Անհրաժեշտ է ձեռք բերել 70 մմ տրամագծով 2 կմ երկարությամբ խողովակ, ջրաբաշխիչներ և այլ օժանդակ նյութեր: Ջրաբաշխիչի տեղադրում: Ծրագրի ակնկալվող արդյունքները՝ Երկարատև ժամանակաշրջանի համար Աղվանիի բոլոր տնտեսություններն ապահովված կլինեն ոռոգման համար պիտանի ջրով: Ուղղակի շահառուների թիվը՝ 92 մարդ: Այլ ծրագրերի հետ կապ չկա:

Ծրագրի անձնագիր 3

«ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂՎԱՆԻ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Աղվանի գյուղի համայնքային կենտրոնի ծառայության ժամկետի երկարացում՝ որպես համայնքապետարան, ակումբ-գրադարան, բուժկետ:					
Ծրագրի անմիջական նպատակ	ԱՂՎԱՆԻ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ					
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ			
		2015	2016	2017	2018	2019
					100%	
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	Զբաղվածության որոշակի մակարդակի ապահովում ծրագրում աշխատող աշխատուժի միջոցով					
	Ցուցան	Ելակետայի	Թիրախային արժեքներ			

	իշներ	ն արժեք				
		2015	2016	2017	2018	2019
					100%	
Ծրագրի հիմնական գործողությունները	Ֆինանսական միջոցների ներգրավում Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում Գնումների գործընթացի իրականացում Աշխատուժի ներգրավում Վերանորոգման աշխատանքների կատարում					
Ծրագրի բյուջեն	Ընդհուր բյուջեն՝ 7,5 մլն ՀՀ դրամ					
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը						
Ծրագրի հիմնական շահառուները	Աղվանի գյուղի բնակչություն					
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018					
Ծրագրի համառոտ նկարագրություն	Պատասխանատու՝ Աղվանի համայնքի ղեկավար Ծրագրի մոտավոր ընդհանուր արժեքը՝ 7500 հազար դրամ Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը՝ Վերանորոգում Ծրագրի հիմնավորումը՝ Աղվանի գյուղի համայնքային կենտրոնը ծառայում է որպես գյուղապետարան, ակումբ-գրադարան, բուժկետ: Տանիքը 400 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անհրաժեշտ է վերանորոգել: Տեղումների ժամանակ տանիքից ջուր է կաթում դեպի առաստաղ և վնասում է շենքը: Հնարավոր չէ մեկ կամ մի քանի տեղերում փոխել և պաշտպանել շենքը: Անհրաժեշտ է բոլոր կոնստրուկցիաները փոխարինել նորերով; Անհրաժեշտ է ձեռք բերել 400 քառակուսի մետր տանիքի ծածկ, ծածկի հենակներ և փոխել: Ուղղակի շահառուների թիվը՝ 92 մարդ: Այլ ծրագրերի հետ կապ չկա:					

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ 2015-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Հ/հ	Շենքի, շինության, անվանումը	Հասցեն	Տարածքը/մակերեսը ($մ^2$)	Վիճակի գնահատականը	Այլ բնութագրիչներ	Նախնական արժեքը (հազ. դրամ)			
						2015	2016	2017	2018
1	Անասնաշենք	Աղվանի, 1փ, 1/1		անբավարար	Ենթակա է քանդման կամ վաճառքի	200			

Աղվանի գյուղում գտնվող, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի "Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին" N51 որոշման 5-րդ կետի Աղվանի գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող անասնաշենքը Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի մարտի 14-ի "Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին" N51 որոշման 5-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված ժամկետներում ընդգրկված չի եղել Աղվանի գյուղական համայնքի սեփականության գույքի ցանկում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աղվանի գյուղական համայնքի ղեկավարի կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում հաշվառվել է որպես համայնքի գույք, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N05052015-09-0014 վկայականի որպես համայնքի սեփականություն ստացել է պետական գրանցում, "ՎԻ-ԷՄ-ԱՐ" սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման ՆՎՄ-30/681 հաշվետվության համաձայն 2015 թվականի հունիսի 22-ի դրությամբ ունի 200 000 դրամ շուկայական արժեք: Շենքի մասով առկա է Սեյսմիկ պաշտպանության հարավային ծառայություն" ՊՈԱԿ կողմից 2015 թվականի ապրիլի 27-ին տրված տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության աստիճանի գնահատման եզրակացություն, ըստ որի շենքի սեյսմիկ խոցելիության աստիճանը գնահատվել է բարձր, շենքի վերակառուցողական աշխատանքների ծախսերը կգերազանցեն տեխնիկատնտեսական արդարացված ծախսերը, նպատակահարմար է համարվել շենքի ապամոնտաժումը:

Ելնելով դրանից նշված անասնաշենքն աննպատակահարմար է պահպանել որպես համայնքի սեփականություն և պետք է փորձել օտարել՝ այդպիսով ապահովելով որոշակի եկամուտներ համայնքի համար: Շենքն ընդգրկվում է Համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների 2015-2019 թվականների օտարման քառամյա ծրագրում, ինչպես նաև Համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների 2015 թվականի օտարման տարեկան ծրագրում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ 2015-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

2015-2019 թվականների ընթացքում նախատեսվում է օտարել Աղվանի գյուղի 1-ին փողոցի 1/1 հասցեում գտնվող 72մX21մ առանցքային չափերով անասնաշենքը: Անանսաշենքի օտարման դեպքում կարող է առաջանալ այդ շենքի տակ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող մոտ 0,15 հա մակերեսով հողամասն օտարելու անհրաժեշտություն: Այդ նպատակով հողամասի օտարման դրույթը ներառվում է սույն օտարման ծրագրում: Օտարման գործընթացը՝ հողահատկացումները պետք է կազմակերպվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի

"«Տաթև» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին" N848-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 8-րդ կետի 4-րդ ենթակետին համաձայն՝ հողահատկացումներն իրականացնել «Տաթև» զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագրի և քաղաքաշինական փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

Հ/հ	Հողամասի անվանումը	Հասցեն	Տարածքը/մակերեսը (հա)	Նախնական արժեքը (հազ. դրամ)			
				2015	2016	2017	2018
1	Անասնաշենքի տակ գտնվող	Աղվանի, 1փ, 1/1	0,15	Արժեքը կորոշվի օտարման գործընթացի սկզբին			

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆՈՂ՝ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՄԱՆ (ԼՐԱՑՄԱՆ) ՄԱՍԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Համայնքի քաղաքաշինական գլխավոր հատակագիծը դեռևս մշակված և հաստատված չէ: Դրա համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել 2021 թվականի հունվարի 1-ից սկսած հատակագիծը վերջնակապես մշակված և հաստատված վիճակում ունենալու համար՝ համապատասխան ֆինանսավորման դեպքում: Ներկայումս այն Համայնքի բյուջեի միջոցներով հնարավոր չէ իրականացնել:

Անհրաժեշտ է Համայնքի տարածքում վերանայել ճանապարհների, փողոցների անվանումները, շենքերի, շինությունների համարակալումները, կազմակերպել ցուցանակների տեղադրման աշխատանքներ: Համայնքի տարածքում անհրաժեշտ է կատարել շինությունների հաշվառում, պարզել դրանց ինքնակամ կամ օրենքով սահմանված կարգով կառուցված լինելը և այլ քաղաքաշինական աշխատանքներ (անհրաժեշտ է մշակել բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը և այլն):

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Շրջակա միջավայրի պահպանության բնագավառի զարգացումն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ գործառույթները.

1) ավելացնել փողոցների սանիտարական մաքրման և աղբահանության ծավալները.
2) աջակցել շրջակա միջավայրի առողջացմանը և սանիտարական մաքրությանը.
3) մշակել կենցաղային աղբի հեռացման նոր մեխանիզմներ, բնակչության շրջանում բացատրական աշխատանքներ տանել շրջակա միջավայրի մաքրության, պահպանության անհրաժեշտության վերաբերյալ:
4) Կազմակերպել ծառատունկ Հայրենական պատերազմում զոհվածների հուշարձանի շրջակայքում:

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Համայնքում գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ անհրաժեշտ է նպաստել գործարարների կողմից Համայնքում ներդրումներ կատարելուն, բարձրացնել Համայնքի ներդրումային գրավչության մակարդակը:

Արդեն նշվել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի "«Տաթև» զբոսաշրջային կենտրոն հայտարարելու մասին" N848-Ն որոշման համաձայն Աղվանի գյուղական համայնքը նույնպես մտել է "Տաթև" զբոսաշրջային կենտրոնի մեջ՝ Հայաստանի

Հանրապետության Սյունիքի մարզի Խոտի, Շինուհայրի, Հալիձորի, Տաթևի, Սվարանցի, Տանձատափի, Բարձրավանի և Քաշունիի գյուղական համայնքների հետ միասին:

Սա ևս գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառում է:

«Տաթև» զբոսաշրջային կենտրոնում կատարվող միջոցառումները պետք է նպաստեն Համայնքում նոր, որակյալ աշխատատեղերի (այդ թվում՝ ոչ գյուղատնտեսական) ստեղծմանը:

Համայնքում կարելի է խթանել գյուղատնտեսությամբ զբաղվելը՝ անասնապահություն, թռչնաբուծություն՝ նաև Համայնքում առկա արտադրական և այլ շինությունների պոտենցիալը վերականգնելու, դրանք գործարարությամբ զբաղվել ցանկացողներին փոխշահավետ պայմաններով օտարելու կամ հատկացնելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ընդհանուր կոյուղի կառուցելու, կազմակերպված աղբահանություն իրականացնելու ուղղությամբ, միջոցներ ձեռնարկել գյուղի գերեզմանատան մաքրման, ցանկապատի առանձին հատվածների վերանորոգման ուղղությամբ:

4.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի նախնական մոտավոր արժեքը (հազ. դրամ)
1	Աղվանի գյուղի խմելու ջրատարի վերանորոգում (50մմ տրամ. 1,5կմ)	1200
2	Ոռոգման ջրատարի վերանորոգում (70մմ տրամ.2կմ)	2200
3	Համայնքային կենտրոնի շենքի տանիքի վերանորոգում 400 քառ. մետր	7500
	Ընդամենը	**10900**

Համայնքը չունի հնարավորություններ զարգացման ծրագրով նախատեսված ներդրումային խնդիրներ լուծելու համար, այդ պատճառով Համայնքի զարգացման ծրագրում ընդգրկված այս ծրագրերը պետք է ֆինանսավորվեն այլ աղբյուրներից՝ մասնավորապես դրանք կարող են լինել.

- Ներքին պաշտոնական դրամաշնորհներ
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ,
- Բարեգործություն/նվիրատվություն:

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Համայնքի զարգացման ծրագիրը կենթարկվի մոնիթորինգի: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել:

Մոնիթորինգային ցուցանիշների մասին տեղեկությունները կհավաքագրվեն կիսամյակային և տարեկան կտրվածքով: Մոնիթորինգի հաշվետվությունը համայնքի ավագանուն կներկայացվի ամեն տարի, հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակում:

Մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն կներկայացնի հաշվետու տարում զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվություն, որը կհրապարակվի օրենքով սահմանված կարգով:

Համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարի ներկայացրած հաշվետվությունից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, զարգացման ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են առաջարկվել համայնքի ղեկավարի կամ համայնքի ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի կողմից:

Հ/հ	Ցուցանիշներ, որոնք կօգտագործվեն մոնիտորինգի ժամանակ	Չափի միավոր	2014թ. Կանխ	2014թ. փաստ.	2015թ. կանխ.	2016թ. կանխ.	2017թ. կանխ.	2018թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Համայնքի վարչական տարածքը	հա						
2.	Բնակչության թիվը	մարդ	92	92	92	94	94	94
3.	Բնակելի շենքերի ընդհանուր թիվը	շենք	56	56	56	56	56	56
	ընդհանուր մակերեսը	հազ.քմ	3500	3500	3500	3500	3500	3500
	բնակարանների թիվը	բնակար.	0	0	0	0	0	0
4.	Վթարային շենքերի թիվը, այդ թվում՝	շենք	X	X	X	X	X	X
	II կարգի վթարային շենքեր	- // -	X	X	X	X	X	X
	III կարգի վթարային շենքեր	- // -	X	X	X	X	X	X
	IV կարգի վթարային շենքեր	- // -	X	X	X	X	X	X
5.	Վերելակային տնտեսություն		0	0	0	0	0	0
	Վերելակով շենքերի թիվը	շենք	0	0	0	0	0	0
	Վերելակների ընդհանուր թիվը	հատ	0	0	0	0	0	0
	Գործող վերելակների թիվը	- // -	0	0	0	0	0	0
6.	Ավտոտնակների թիվը	հատ	2	2	2	2	2	2
7.	Համատիրությունների թիվը	հատ	0	0	0	0	0	0
8.	Լիազորագրային կառավարման անցած բնակելի շենքերի թիվը	շենք	0	0	0	0	0	0
9.	Տեղափոխվող աղբի քանակը	տոննա	0	0	0	0	0	0
	այդ թվում՝ բնակչությունից		0	0	0	0	0	0
10.	Սանիտարական մաքրման և աղբահանության մեքենայական պարկի մեքենա-մեխանիզմների քանակը	Միավոր	0	0	0	0	0	0
11.	Սանիտարական մաքրման տարածքը	հա	0	0	0	0	0	0
12.	Մեքենայական պարկի տեխնիկական պատրաստականության օգտակար	գոր-ծակից	0	0	0	0	0	0

	գործողության գործակիցը							
13.	Ոռոգման ցանցի երկարությունը	կմ	0	0	0	0	0	0
14.	Ոռոգելի տարածքի մակերեսը	հա	0	0	0	0	0	0
15.	Մեկ բնակչին ընկնող կանաչ տարածքը	քմ						
16.	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը	կմ	20	20	20	20	20	20
17.	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների մակերեսը	հազ.քմ						
18.	Առևտրի և սպասարկման օբյեկտների թիվը, այդ թվում՝	հատ	0	0	0	0	0	0
	առևտրի օբյեկտներ		0	0	0	0	0	0
	Ժ. 24-ից հետո աշխատող օբյեկտներ		0	0	0	0	0	0
	բենզինի լիցքավորման կետեր		0	0	0	0	0	0
	գազի լիցքավորման կետեր		0	0	0	0	0	0
19.	Համայնքի սեփականություն համարվող հողերի մակերեսը	հա						
20.	Պետական պահուստային հողերի մակերեսը	հա						
	Պահուստային հողերի օգտ. մակարդակը	%						
21.	Բնակարանի կարիքավոր ընտանիք. թիվը	ընտ.	0	0	0	0	0	0
22.	Նախադպրոցական հիմնարկների թիվը	հատ	0	0	0	0	0	0
	զբաղեցրած հողատարածքը	հազ.քմ	0	0	0	0	0	0
	շենքերի տարածքը	քմ	0	0	0	0	0	0
	երեխաների թիվը	մարդ	0	0	0	0	0	0
	խմբերի թիվը	խումբ	0	0	0	0	0	0
23.	Հանրակրթական դպրոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0
	աշակերտների թիվը	մարդ	0	0	0	0	0	0
24.	Երաժշտական դպրոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0
	սովորողների թիվը	մարդ	0	0	0	0	0	0
	բաժինների թիվը	բաժին	0	0	0	0	0	0
	խմբերի թիվը	խումբ	0	0	0	0	0	0
25.	Մարզադպրոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0
	երեխաների թիվը	մարդ	0	0	0	0	0	0
	մարզաձևերի թիվը	հատ	0	0	0	0	0	0
	խմբերի թիվը	խումբ	0	0	0	0	0	0
26.	Արտադպրոցական հիմնարկների թիվը	հատ	0	0	0	0	0	0
	երեխաների թիվը	մարդ	0	0	0	0	0	0
	խմբերի թիվը	խումբ	0	0	0	0	0	0
27.	Մշակութային հիմնարկների թիվը	հատ	0	0	0	0	0	0
	երեխաների թիվը	մարդ	0	0	0	0	0	0
	խմբերի թիվը	խումբ	0	0	0	0	0	0
28.	Հիվանդանոցների թիվը	հատ	0	0	0	0	0	0

	մահճակալների թիվը	հատ	0	0	0	0	0	0
29.	Պոլիկլինիկա-ամբուլատորիաների թիվը	հատ	0	0	0	0	0	0
	այցելությունների թիվը	մարդ	0	0	0	0	0	0
30.	Անապահով ընտանիքների թիվը	ընտ.	7	7	7	7	7	7
31.	Կենսաթոշակառուների թիվը	մարդ	25	25	25	25	25	25
32.	Հաշմանդամների թիվը	մարդ	0	0	0	0	0	0
33.	Պատերազմի և աշխ. վետերանների թիվը	մարդ	1	1	1	1	1	1
34.	Գործազուրկների թիվը	մարդ	0	0	0	0	0	0
35.	Փախստականների թիվը	մարդ	0	0	0	0	0	0
36.	Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը	ընտ.	0	0	0	0	0	0
37.	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը	հազ. դրամ						
38.	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ	%						
39.	Կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ	%	0	0	0	0	0	0
	այդ թվում՝ սեփական միջոցների հաշվին	%	0	0	0	0	0	0
40.	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ	%						
41.	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարողականը ճշտված պլանի նկատմամբ	%						
42.	Համայնքի աշխատողների աշխատավարձերի տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ	%						
43.	Համայնքի աշխատողների պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր ծախսերի մեջ	%						
44.	Այլ ցուցանիշներ							
45.	Այլ ֆինանսական ցուցանիշներ							

»:

ՀՀ Սյունիքի մարզի Աղվանի
համայնքի ղեկավար՝ Ա.Սուքիասյան